Հայաստանում տարածվում է ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ-ի ուսուցման մեթոդը

Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պոլիտեխնիկական քոլեջի դասախոսները մասնակցել են երկու վերապատրաստման դասընթացի ՏՈՒԿ ՖԱԱՌԱԼՊ տեխնոլոգիական ուսուցման կենտրոնում:

Նրանք բարձր գնահատեցին դասավանդման մեթոդը և ցանկություն հայտնեցին իրենց քոլեջում ևս նույն մեթոդով դասավանդել իրենց աշակերտներին Elec-00 (էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի բազային գիտելիքներ) մոդուլը:

Իրենց հաստատությունում դասավանդման ժամանակահատվածը՝ 27.05.2024-31.05.2024թ. որոշելուց հետո, ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊԻ-ի դասավանդող Վաղարշակը կիրակի օրը՝ մայիսի 26-ին, մեկնեց Վանաձորի պոլիտեխնիկական քոլեջ և քոլեջի դասախոսների օգնությամբ տեղադրեց մոդուլը դասավանդելու համար բոլոր անհրաժեշտ ուսումնական նյութերը:

Տեղադրվեցին համակարգիչներ, որպեսզի ուսանողները նախքան էլեկտրական լարերի միացումներ կատարելը, կարողանան առաջարկվող լուծումները փորձարկել սիմուլյացիոն ծրագրի միջոցով և կազմել ստանդարտներին համապատասխան էլեկտրական սխեմաներ:

Ուսումնական նյութերը պատրաստ են ուսանողների կողմից գործնական աշխատանքները կատարելու համար:



Երկուշաբթի, մայիսի 27-ին մեկնարկվեց դասընթացը գիտելիքների տրամադրմամբ, երկու ուսուցիչների ղեկավարությամբ և 12 մոտիվացված աշակերտների մասնակցությամբ:

Դասախոսների ղեկավարությամբ, աշակերտները զույգերով ինքնուրույն աշխատեցին Elec-00 ՝ «գործնական աշխատանք » ձևաչափով:





Որոշ գործողություններ պահանջում էին պաշտպանություն և անվտանգության միջոցների սարքեր՝

վնասվածքներից և էլեկտրական հոսանքի վտանգներից պաշտպանվելու համար:

Հարկ է նշել, որ մանկավարժական պրոֆեսիոնալիզմը և ուսուցիչների ձեռք բերած բարձր տեխնիկական մակարդակը մոտիվացրեցին ուսանողներին սովորելուն:

Քոլեջի տնօրեն՝ Տաթևիկ Փնջոյան

«Elec00» (Էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի բազային գիտելիքներ) վերապատրաստման մոդուլին մասնակցելուց հետո, որը տևեց 5 օր, մոտ 20 ժամ ինտենսիվ ուսուցում, ուսանողները ստացան Ս. Թևոսյանի անվան պոլիտեխնիկական քոլեջի և ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ տեխնոլոգիական ուսումնական կենտրոնի կողմից համատեղ կազմակերպած (Էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի բազային գիտելիքներ) մոդուլի մասնակցության հավաստագրեր:

- Դասընթացը ուներ եզակի ռազմավարություն, որի արդյունքում ստացանք.
1. Թիմային աշխատանքի կարևորություն և հնարավորություն
2. Ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների կիրառումը գործնականորեն
3. Գիտելիքների հավասարեցում
4. Ուսանողների մոտիվացված աշխատանք

Ուսանողի մոտ ձևավորվում է նաև նպատակին հասնելու ճշգրիտ քայլեր, որը տալիս է ցանկալի արդյունք:

Ինձ համար այլևս անհրաժեշտություն եմ համարում նման մեթոդ կիրառելու այլ մոդուլների դասավանդման համար:

Շնորհակալություն Վաղարշակ Հովսեփյանին պրոֆեսիոնալ մոտեցման և CFT-FAARALP-ին համագործակցության համար: Կարծում եմ այն կլինի շարունակական:

Դանիելյան Գոհար, քոլեջի դասախոս